ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն ՄԻՐԶՈՅԱՆ,

«2016թ. ապրիլին ծավալված մարտական գործողությունների հանգամանքներն ուսումնասիրող» Ազգային Ժողովի քննիչ հանձնաժողովը 28.11.2019թ. տեղի ունեցած փակ նիստում որոշել է «Ազգային Ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովի լիազորությունների ժամկետը երկարաձգել 6 ամսով:

Կից ներկայացվում է Ազգային Ժողովի որոշման համապատասխան նախագիծը:

Խնդրում եմ հարցի քննարկումը «Ազգային Ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի 15-րդ կետի համաձայն ընդգրկել 2019թ. դեկտեմբերի 3-6-ը գումարվող Ազգային Ժողովի հերթական նիստերի օրակարգում:

Ազգային Ժողովի նիստում հարցի քննարկման ժամանակ որոշման նախագիծը կներկայացնի «2016թ. ապրիլին ծավալված մարտական գործողությունների հանգամանքներն ուսումնասիրող» Ազգային Ժողովի քննիչ հանձնաժողովի նախագահը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ***ԱՆԴՐԱՆԻԿ ՔՈՉԱՐՅԱՆ***

Նախագիծ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«2016թ. ապրիլին ծավալված մարտական գործողությունների հանգամանքներն ուսումնասիրող» Ազգային Ժողովի քննիչ հանձնաժողովի գործունեության ժամկետը երկարաձգելու մասին

ՀՀ Ազգային Ժողովը որոշեց «2016թ. ապրիլին ծավալված մարտական գործողությունների հանգամանքներն ուսումնասիրող» Ազգային Ժողովի քննիչ հանձնաժողովի գործունեության ժամկետը երկարաձգել 6 ամսով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Ազգային Ժողովի 2016թ. ապրիլին ծավալված մարտական գործողությունները ուսումնասիրող քննիչ հանձնաժողովը 28.11.2019թ փակ նիստի ժամանակ որոշեց.

համաձայն Ազգային Ժողովի Կանոնակարգ օրենսգրքի 20-րդ հոդվածի 7-րդ կետի՝

հիմք ընդունելով այն հանգամանքը, որ անհրաժեշտ է շարունակել ուսումնասիրել մեծ ծավալի գաղտնի և հույժ գաղտնի փաստաթղթեր, քննել մարտական գործողությունների տասնյակ մասնակիցների և ուսումնասիրել ու վերլուծել բազմաթիվ տեսանյութեր, երկարաձգել հանձնաժողովի աշխատանքները ևս 6 ամսով:

Հանձնաժողովի նախագահ՝ Անդրանիկ Քոչարյան

Անդամներ՝ Վարդան Վարդանյան

Արմեն Խաչատրյան

Տիգրան Կարապետյան

Արեն Մկրտչյան

Քրիստինե Պողոսյան

Սիփան Փաշինյան

Սողոմոն Սողոմոնյան

Գևորգ Գորգիսյան

Ռուբիկ Ստեփանյան